ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Առարկա

Աշխարհագրություն

Թեմա

Խաղաղություն և պատերազմ

Կատարող

Լաուրա Քոչարյան Ռազմիկի

/անուն,ազգանուն հայրանուն/

Շիրակի մարզի Շիրակի միջնակարգ դպրոց, աշխարհագրություն

/դպրոց մասնագիտություն,ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ **Վիոլետա Գրիգորյան**

/անուն,ազգանուն/

ԳՅՈՒՄՐԻ 2023

Բովանդակություն

Ներածություն 3
Պատերազմը որպես սոցիալական երևույթ:..... 4
Առաջին համաշխարհային պատերազմ:..... 6
Երկրորդ համաշխարհային պատերազմ:..... 6
Առաջին համաշխարհային պատերազմ՝ 8
Երկրորդ համաշխարհային պատերազմ՝ 8
Տարածքային հակամարտություններ: 12
Հակամարտության հետևանքները:..... 15
Գրականության ցանկ 18

Ներածություն

Թեման-խաղաղություն,պատերազմ

Այս թեման շատ արդիական է,իսկապես մեր երկրի իրավիճակից ելնելով,մինչ այդ մենք չէինք գիտակցում խաղաղության գինը,իսկ այժմ մեր միակ բաղձանքն է խաղաղությունը:

Թող ոչ մի տեղ չլինի պատերազմ,թող միշտ լինի խաղաղություն,անամպ երկինք:

Պատերազմը որպես սոցիալական երևույթ։

Ժամանակակից քաղաքագիտությունը պատերազմը բնութագրում է որպես սոցիալական երևույթ ,որն իրենից ներկայացնում է պետությունների,ժողովուրդների,ազգերի,դասակարգերի սոցիալական խմբերի միջև հասարակական քաղաքական, տնտեսական, գաղափարական, ինչպես նաև ազգային, կրոնական, տարածքային և այլ հակասությունների լուծման ձևերից մեկը,որն իրականացվում է զինված բռնության միջոցներով։

Պատերազմի համար գլխավոր են համարում հետևյալ հատկանիշները։

1. Այն ծնվում է օբյեկտիվ-սուբյեկտիվ բնույթի խորքային քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատճառներից։
2. Նրա բովանդակությունը համապատասխանում է այն քաղաքական ու ռազմաստրատեգիական նպատակներին, որոնց կարելի է հասնել զինված բռնության եղանակով։
3. Պատերազմը հանգեցնում է հասարակական կյանքի բոլոր քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր ոլորտների վիճակի որակական փոփոխությունների, անխուսափելի է դարձնում դրա վերակառուցումը և ռազմական պահանջներին համապատասխանացումը։
4. Պատերազմը վարելու գլխավոր միջոցը զինված ուժերն են, լայնամասշտաբ գործողություններ կատարելու նրանց կարողությունը։Եվ վերջապես մի կարևոր տարբերիչ գիծ ևս։

5. Պատերազմը հանգեցնում է մեծաքանակ մարդկային զոհերի, նյութական և հոգևոր արժեքների կորստի, քայքայիչ ազդեցություն է ունենում ամբողջ հասարակության վրա։

Տարբեր են եղել նաև պատերազմների նպատակները; Օրինակ, նախնադարյան համայնական հասարակարգում տոհմերի միջև զինված բախումները պայմանավորված էին սնունդ, նոր որսատեղի, նոր արոտավայր ձեռք բերելու անհրաժեշտությամբ։

Ռազմական տեսությունը մեծ նշանակություն է տալիս պատերազմների դասակարգումը, որը հիմնվում է դրանց սոցիալ-քաղաքական հատկանիշների վրա։ Տարբերվում են մասնավորապես արդարացի և ոչ արդարացի պատերազմները։

Արդարացի են համարվում այն պատերազմները,որոնք ժողովուրդները մղում են օտար ճնշումից ու շահագործումից ազատագրվելու,ազգային անկախության և հայրենիքը արտաքին ագրեսիայից պաշտպանվելու համար։Ոչ արդարացի են այլ տարածքներ նվաճելու ,այլ ժողովրդի ազատագրական պայքարը ճնշելու,սեփական կամքը ուրիշին պարտադրելու նպատակով մղվող պատերազմները։

Գիտնականները հաշվել են, որ մարդկային հասարակությունն իր հինգուկես հազարամյա պատմության ընթացքում ընդամենը 292 տարի է ապրել առանց պատերազմների,լիարժեք խաղաղության պայմաններում։

Պատմության ընթացքում գրանցված պատերազմների թիվը հասնում է 15 հազարի։Ժամանակի ընթացքում պատերազմների հաճախականությունը նվազում է,բայց մեծանում է դրանց ընդգրկումը,պատերազմները դառնում են ավելի կործանարար,արյունալի ու դաժան։Գիտնականները նշում են,որ սկզբում պատերազմները գնում էին ցեղապետերի,ապա թագավորների

միջև,ավելի ուշ,ազգային պետությունների ձևավորումից հետո ժողովուրդների միջև;

Այժմ նկատելի է դառնում այն միտումը,որ համաշխարհային հակասություններն առավել սրվում են քաղաքակրթությունների միջև:Նորագույն ժամանակների ծնունդ են համաշխարհային պատերազմները,որոնք իրենց արյունոտ հորձանուտի մեջ ներքաշում են ամբողջ աշխարհը,գրեթե բոլոր պետություններին:Ռազմական փորձագետների կարծիքով նոր համաշխարհային պատերազմը,եթե այն սանձազերծվի,անպայման կլինի միջուկային պատերազմ և դրա բոցերում կոչնչանա մարդկային քաղաքակրթությունն ընդհանրապես:

Առաջին համաշխարհային պատերազմ:

Պատերազմը սկսվեց 1914թ. հուլիսին Սերբիայի վրա Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի վրա Գերմանիայի հարձակումով:Այն տևեց 4 տարի 4 ամսի և ավարտվեց 1918թ. նոյեմբերին:

Պտերազմին մասնակցեց 38 պետություն՝ 1,5 մլրդ բնակչություն:

Դա աշխարհի այն ժամանակվա բնակչության 87%-ն էր: Սպանվածների թիվը կազմել է 10 մլն, վիրավորներինն ու խեղվածներինը՝ ավելի քան 20մլն:

Երկրորդ համաշխարհային պատերազմ:

Երկրորդ համաշխարհային պատերազմը նույնպես սանձազերծեց Գերմանիան: Պատերազմի սկզբում նրան հաջողվեց զավթել գրեթե ամբողջ ցամաքային Եվրոպան՝ Ատլանտյան օվկիանոսից մինչև Վոլգա:Ճապոնիան իր հերթին զավթեց Չինաստանի հյուսիս-արևելյան

մասը(Մանջուրիան), Մալազիան, Ինդոնեզիան, Ֆիլիպինները, Բիրման։ Գերմանա-իտալա-ճապոնական առանցքի դեմ կանգնած էին «մեծ դաշնակիցները»՝ ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և դրանց հարևան մեծ ու փոքր շատ երկներ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ ներքաշված էին 72 երկիր, որտեղ բնակվուում էին 2,4 մլրդ մարդ՝ աշխարհի բնակչության 96%-ը։ Պատերազմի զոհերի թիվը կազմեց 5,5մլն մարդ։Պատերազմը ավարտվեց, պատերազմի հանցագործները միջազգային դատարանի կողմից ստացան իրենց արժանի պատիժը։

Հիմնադրվեց Միավորված Ազգերի Կազմակերպությունը ՄԱԿ, որն իր գլխավոր նպատակը հռչակեց խաղաղության պահպանումը դատապարտեց պատերազմը որպես միջազգային հարցերի լուծման միջոց;

Թվում էր,որ եկել էր ժամանակը,որպեսզի ժողովուրդներն իսկապես հրաժարվեն այդ միջոցից, 60 տարուց ավելի,որ մարդկությունը կարողանում է խուսափել նոր համաշխարհային պատերազմից, բայց տեղական պատերազմները դեռևս չեն վերացել։1945թ-ից ի վեր աշխարհի տարբեր մասերում տեղի են ունեցել առնվազն 80 տեղական պատերազմներ, որոնց ընթացքում զոհվել է մինչև 30 մլն մարդ։

Հատկապես տևական ու արյունահեղ են եղել քաղաքացիական պատերազմը Չինաստանում, որը տևեց 17 տարի և ավարտվեց 1949թ. Կորեական պատերազմը։ (1952-1963 թթ.) ԱՄՆ-ի պատերազմը Վիետնամում (1964-1973 թթ.) պատերազմները Հնդկաստանի ու Պակիստանի, Իսրայելի ու արաբական երկրների, Իրանի ու Իրաքի միջև, խորհրդային ներխուժումը Աֆղանստան, որը տևեց ավելի քան 9 տարի,

Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ, Արևմտյան պետությունների ռազմական միջամտությունը Սերբիայում (Կոսովո), ամերիկյան զորքերի ներխուժումը Աֆղանստան և Իրաք, արյունահեղ պատերազմներ տեղի ունեցան Կոլումբիայում, Նիգերիայում, Ուգանդայում, Անգոլայում, Սոմալիում, Տաջիկստանում, Վրաստանում, Մոլդովայում, Ադրբեջանում, Հս. Կովկասում, նախկին Հարավսլավիայում: Դրանց մի մասը շարունակվում է մինչև այժմ:

Առաջին համաշխարհային պատերազմ՝

Տևողությունը՝ 1914-1918թթ., մասնակցած պետությունների թիվը՝ 38, մասնակից պետությունների բնակչության թիվը՝ 1,5 մլրդ, զոհերի թիվը՝ 20մլն:

Երկրորդ համաշխարհային պատերազմ՝

Տևողությունը՝ 1939-1945թթ., մասնակցած պետությունների թիվը՝ 72, մասնակից պետությունների բնակչության թիվը՝ 2,4 մլրդ, զոհերի թիվը՝ 55մլն: 1945թվ. ի վեր աշխարհի տարբեր մասերում տեղի է ունեցել առնվազն 80 տեղական պատերազմ, որտեղ զոհվել է 30մլն մարդ: Ռազմական գործողությունները կարող են ագրեսիայի ձև ընդունել: Ագրեսիա է կոչվում պետության ինքնիշխանության(սուվերեմիտետ) տարածքային անձեռմխելիության կամ քաղաքական անկախության դեմ:Ագրեսիան արգելված է միջազգային իրավունքով:

Օկուպացիա է կոչվում այն դեպքը,երբ մի պետության զինված ուժերը ժամանակավորապես նվաճում են այլ պետության տարածքը և

հաստատում են նվաճված տարածքների զինվորական վարչություն (ադմինիստրացիա)։ Օկուպացված տարածքների ճակատագիրը սովորաբար որոշվում է պատերազմից հետո երկկողմ կամ բազմաթիվ բանակցությունների միջոցով։ Քաղաքագետներից մեկը այն միտքն է հայտնել, որ պատերազմը սկսում են, երբ ցանկանում են, բայց ավարտում են, երբ կարողանում են։ Համընդհանուր խաղաղություն պահպանելու գլխավոր պայմանն այն է, որ ամեն մի պետություն վստահ լինի, որ իր անվտանգությունն ապահովված է։

Միջազգային անվտանգությունը միջազգային հարաբերությունների այն վիճակն է, երբ բացառվում է ընդհանուր խաղաղության ամեն մի խախտում և ժողովուրդների անվտանգության որևէ սպառնալիք։ Մարդկությունը մշակել է միջազգային անվտանգության պահպանման կայուն սկզբունքներ։ Դրանք ամրագրված են միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ և մի շարք այլ միջազգային փաստաթղթերում։ Այդ սկզբունքներից առանձնացնենք մի քանի առավել կարևորները։

- Միջազգային վեճերի լուծում խաղաղ միջոցներով։
- Միջազգային համագործակցություն տարբեր ազգային, տարածաշրջանային ու համամոլորակային հիմնախնդիրների լուծման համար։
- Ուժի և սպառնալիքի ցանկացած ձևի գործադրման բացառում։

Միջազգային անվտանգության կարևոր միջոցներից են ապառազմականացումը, ինչպես նաև միջուկազերծ և խաղաղության գոտիների ստեղծումը։ Խաղաղության գոտի հասկացությունը սովորաբար կիրառվում է տարբեր պետություններ ընդգրկող ընդարձակ տարածաշրջանի նկատմանբ։ Գոտու մեջ մտնող պետությունները

պարտավորվում են օրինակ, փոխադարձաբար նվազեցնել սեփական սպառազինությունների մակարդակը, վերացնել ռազմական հենակետերը և իրականացնել այլ ռազմական ու քաղաքական միջոցառումներ։ Միջուկազերծ գոտի հայտարարվում է այն տարածքը, որտեղ հատուկ միջազգային պայմանագրերով արգելվում է միջուկային զենքի տեղաբաշխումը։ Միջուկազերծ գոտի ստեղծելու դեպքում միջուկային տերությունները պարտավորվում են միջուկային զենք չտալ գոտու որևէ պետության և չօժանդակել այդպիսինի ստեղծմանը, միաժամանակ այդ պետության դեմ չկիրառել միջուկային զենք։

ՄԱԿ-ի Կանոնադրության համապատասխան միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման գլխավոր պատասխանատվությունը դրված է նրա հատուկ մարմնի՝ Անվտանգության Խորհրդի վրա։

Անվտանգության խորհուրդը օժտված է ամենալայն իրավունքներով, որոնց համար օգտագործվում են զինված ուժեր կամ զինվորական դիտորդներ։ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը, որոնք հայտնի են նաև <<երկնագույն սաղավարտներ>> անունով (նրանք կրում են երկնագույն գլխարկներ), ֆինանսավորվում են ՄԱԿ-ի կողմից։ Այդ ուժերը սովորաբար կատարում են 4 տիպի գործողություններ՝ խաղաղության պահպանում (եթե այն չի խախտված), խաղաղության հաստատման (եթե պատերազմը դեռ շարունակվում է), կանխիչ (նախազգուշական), դիվանագիտական և խաղաղ շինարարական (խաղաղ կոնֆլիկտի ավարտից հետո)։ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի գործողությունները մինչև այժմ ընթացել է 2 գլխավոր ուղղությամբ.

Ա. Ռազմական միջոցառումներ

Բ. Քաղաքացիական միջոցառումներ

Ռազմական միջոցառումների մեջ մտնում են ապառազմականացված գոտու պարեկությունը, մարդասիրական քարավաններին ուղեկցող պահակախմբերի պաշտպանությունը, հրադադարի և դրա պայմանների կատարման վերահսկողությունը։ Ռազմական միջոցառումներին են վերաբերում ապառազմականացված գոտու պարեկությունը, մարդասիրական, ռազմական կոֆլիկտի ավարտից հետո ժողովրդական տնտեսության ենթակառուցվածքի վերականգնմանն ու ստեղծմանն օժանդակելը։

Ակնհայտ է, որ ներկայումս երկրի վրա կուտակված բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք համամարդկային ու համամոլորակային ընդգրկում ունեն, կարող են լուծվել միայն միջազգային հանրության համատեղ ջանքերով։

Միջազգային համագործակցությունը միաժամանակ միջազգային խաղաղության պահպանման կարևորագույն նախադրյալն է։ Դա ժողովուրդներին մղում է բոլոր տեսակի վեճերը լուծելու բանակցությունների միջոցով։ Միջազգային կազմակերպությունները 2 տիպի են՝ կառավարական և ոչ կառավարական։ Ամենահեղինակավոր, առավել լայն իրավունքներով օժտված միջազգային կազմակերպությունը արդեն հռչակված է Միավորված Ազգերի Կազմակերպությունն է ՄԱԿ-ը։Այն ստեղծվել է 2-րդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո (1945թ.), հռչակեց իր գլխավոր նպատակը՝ միավորել ինքնիշխան պետությունների ջանքերը հանուն միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովման, նպաստել ժողովուրդների միջև համագործակցության զարգացմանը։

Սկզբում միավորվեցին աշխարհի 51 պետություններ, որոնք ՄԱԿ-ի հիմնախնդիր անդամներն են: Այժմ ՄԱԿ-ի անդամների թիվը հասնում է 192-ի: ՄԱԿ-ի գլխավոր փաստաթուղթը նրա Կանոնադրությունն է, որը սահմանում է ՄԱկ-ի անդամ պետությունների կարգավորման գլխավոր սկզբունքները: ՄԱԿ-ի Կենտրոնական մարմինը Գլխավոր ասամբ է: Այն բաղկացած է ՄԱԿ-ի բոլոր անդամ պետություններից: Անվտանգության խորհուրդը բաղկացած է 15 անդամ երկրներից: Դրանցից հինգը՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ու Չինաստանը մշտական անդամներ են և միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանության համար հատուկ պատասխանատվություն են կրում:

Ռազմաքաղաքական թեեքում ունեցող ամենահզոր տարածաշրջանային կազմակերպությունը՝ ՆԱՏՕ-ն է: Այն միավորում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի 16 երկրներ, հիմնվել է 1949թ. և ուղղված է գլպավորապես նախկին ԽՍՀՄ-ի ու ՆԱՏՕ-ի հիմնադիր անդամներն են ԱՄՆ-ը, Բելգիան, Դանիան, Նիդեռլանդները, Նորվեգիան, Լյուքսեմբուրգը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Պորտուգալիան և Թուրքիան, Արևմտյան Գերմանիան և Իսպանիան (1982թ.), Իսլանդիան, Իտալիան, Կանադան:

Տարածքային հակամարտություններ:

Պատերազմների բովանդակությունը և նպատակները կարող են շատ տարբեր լինել, բայց գլխավոր նպատակը եղել է, մնում է աշխարհագրական տարածքի ընդարձակումը, պետական սահմանների փոփոխումը: Այսպիսին են եղել առաջին և երկրորդ աշխարհամարտերը, այդպիսին է եղել նաև <<սառը պատերազմը>>, թեև արտաքնապես այն

շղարշված էր գաղափարական բովանդակությամբ: Այդ համաշխարհային պատերազմները և դրանց արդյունք հանդիսացող պետական տարածքների ու սահմանների վերաձևումներն ավարտված են, բայց այժմ էլ աշխարհում հաշվվում է 300 վայր որոնց շուրջը բորբոքվող վեճերը տարածքային հակամարտության են: Դրանցից 100 աշխարհի այսպես կոչված <<թեժ կետեր են>>, որտեղ հակամարտությունը զինված բախումների տեսք է ստացել: Այդպիսիք են, օրինակ Հնդկաստանի ու Պակիստանի տարածքային վեճը Պարսից Ծոցի կղզիների համար, աֆրիկյան պետությունների միջև եղած սահմանային վեճերը: Հատկանշական է, որ Աֆրիկայի տարածքի 20% վիճելի տարածքներ են համարվում, իսկ պետական սահմանների 40% մինչև այժմ դեմարկացված չեն:

Կան նաև այնպիսի դեպքեր, երբ վիճելի տարածքը կտրվում է հակամարտող երկրներից շատ մեծ հեռավորության վրա: Օրինակ՝ Ֆոլկլենդյան (Մալվինյան) կղզիներն Արևմտյան կիսագնդի ծայր հարավում, որոնք հակամարտող կողմերից մեկից՝ Արգենտինայից հեռու են շուրջ 500 կմ, իսկ Մեծ Բրիտանիայից, ավելի քան 10000 կմ:

Տարածքային հակամարտությունները ըստ իրենց բնույթի կարելի է բաժանել 2 խմբի:

- Հակամարտություններ պետությունների միջև
- Հակամարտություններ պետությունների ներսում

Եվրոպայում վիճելի տարածքներ են եղել Գարի մարզը Գերմանիայի և Ֆրանսիայի միջև, Տրանսիլվանիան Հունգարիայի և Ռումինիայի միջև, Մակեդոնիան՝ Բուլղարիայի, Հունաստանի ու Սերբիայի միջև, Տրիեստը Իտալիայի ու Հարավսլավիայի միջև, Սիլեզիան՝ Գերմանիայի ու Լեհաստանի միջև և շատ այլ տարածքներ:

Պատմության ծանոթ են նաև այնպիսի դեպքեր, երբ տարածքային վեճերը լուծվել են խաղաղ ճանապարհով՝ երկկողմ ու բազմակողմ բանակցությունների միջոցով կամ էլ միջազգային դատարանի վճռով։ Եվրոպայում տարածքային վեճի խաղաղ լուծման օրինակ է Տրիեստը։ Խաղաղ սահմանային փոփոխությունների միջոցներն ու պատճառները կարող են տարբեր լինել։ Երկու պետությունների միջև կարող է կատարվել համարժեք տարածքային փոխանակում։ Կան նաև տարածքը վաճառելու դեպքեր, օրինակ, Ռուսաստանի կողմից Ալյասկայի վաճառքը ԱՄՆ-ին 1867թվ.։

Տարածքային փոխանակում կատարվեց Թուրքիայի և Իրանի միջև։ Դա 1920-ական թվականների սկիզբն էր, որը ռուս-թուրքական պայմանագրով Ռուսաստանը ճանաչեց Թուրքիայի կողմից Կարսի մարզի և Սուրմալուի գավառի անեքսիան, ինչպես նաև պաշտոնապես ձևակերպվեց Նախիջևանի հանրապետության ստեղծումն Ադրբեջանի կողմից։

Տարածքային-էթնիկական հակամարտության զարգացման փուլերը։

I) Հակամարտությունը թաքնված է։
II) Հակամարտությունը դրսևորվում է բացահայտորեն։
III) Հակամարտությունը ակտիվ ընթացք ունի։
IV) Պաշտոնապես ձևակերպվում են հակամարտության հետևանքները։

Հակամարտության հետևանքները:

Վաղ թե ուշ ռազմական գործողությունները դադարում են և հրադադար է հաստատվում: Հակամարտության քաղաքաաշխարհագրական հետևանքները կարող են լինել 2 տեսակի:

1. Վերադարձ հակամարտության ելակետային վիճակին և պետության ներսում քաղաքական ու սոցիալ-տնտեսական բարեփոխումների անցկացում: Այդ դեպքում պետության տարածքային ամբողջականությունը պահպանվում է, միջազգային իրավունքը և տարածքային հակամարտությունների կարգավորում է:
2. Միջազգային հարաբերությունները կարգավորվում են միջազգային իրավունքով: Միջազգային իրավունք վճռորոշ է դառնում հատկապես այն դեպքում, երբ հակամարտության արդյունքում փոքրամասնություն կազմող ազգը որոշում է անջատվել և ստեղծել իր սեփական ինքնիշխան պետությունը: Եթե միջազգային հանրությունը չճանաչի նորաստեղծ պետական կազմավորումը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և չընդունի իր շարքերը, ապա այն կմնա մեկուսացված և որպես ինքնիշխան պետություն չի կայանա:

Հակազաղութային ինքնորոշում դա վերաբերում է նախկին գաղութային երկրների անկախացմանը, որը միջազգային հանրության միանշանակ հավանությանն էր արժանանում:

Ենթապետական ինքնորոշում, երբ գոյություն ունեցող պետության ներսում որոշակի էթնիկական խումբ (ազգային փոքրամասնություն) ձգտումը անջատվել և ստեղծել սեփական պետություն: Այս կատոգերիային են պատկանում, օրինակ, Մայվանը և Տիբեթին

(Չինաստան), Փենջաբի (Հնդկաստան), Քրդստան (Թուրքիա), Քվեբեկի (Կանադա), Մերձբնստան (Մոլդովա) հիմնախնդիրները։

Միջազգային հանրությունը անդպետական ինքնորոշման դասական օրինակ է համարում Լեռնային Ղարաբաղի հայության պայքարը Հայաստանին միանալու համար։

Անհրաժեշտ չափանիշ է համարվում բնակչության ազգային կողմը։

Հաջորդ հատկանիշը ճողովրդի կամքի ազատ արտահայտությունն է, որի արդյունքում համաժողովրդական քվեարկության միջոցով ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների ոչ պակաս քան 2/3 համաձայն և ինքնիշխան պետության կարգավիճակին։ Պետություններ կան, որ գոյություն չունեն <<դե յուրե>>, որովհետև միջազգային իրավունքի տեսակետից չեն ապացուցել իրենց օրինական լինելը և միջազգային ճանաչման չեն արժանացել։

Այդ պետություններն են Հյուսիսային Կիպրոսը, Թուրքական Հանրապետությունը, որը անջատվել է Կիպրոսի Թուրքական Հանրապետությունից։ Մերձդնեստրյան Հանրապետությունը՝ Մոլդովայից, Աբխազական Հանրապետությունը՝ Վրաստանից, ԼՂՀ՝ Ադրբեջանից (ԼՂՀ թվարկվում է այս շարքում պայմանականորեն)։

Կիպրոսի հիմնախնդիրը 20 տարուց ավելի է, ինչ Կիպրոսի Հանրապետությունը բռնի ուժով բաժանվել է 2 մասի։ Կղզու բաժանումով մեծապես տուժել է երկրի էկոնոմիկան, կատարվել երկրի բնակչության <<էթնիկական զտումը>>՝ երկրի հյուսիսային մասում բնակվող Կիպրոսցի հույները, դրանց հետ մեկտեղ նաև մյուս քրիստոնյաները վտարվել են իրենց բնակավայրերից և տեղափոխվել հարավ, իսկ հարավի Կիպրոսցի թուրքերը տեղափոխվել հյուսիս։ Կիպրոսյան հակամարտությունը Կիպրոսի թուրքերի և Կիպրոսցի հույների միջև է,

որոնց թիկունքում կանգնած են համապատասխանաբար Թուրքիան և Հունաստանը:

Ընդունված է ասել, թե Կիպրոսը դատապարտված է իր սեփական աշխարհագրական դիրքի զոհը լինելուն: Դրա ճշմարտությունը հաստատող փաստերը շատ են: Գտնվելով Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի սահմանագլխին, Կիպրոսը խոշոր պետությունների համար հաճախ կռվախնձոր է եղել և անցել է ձեռքից ձեռք:

Կիպրոսի անկախությունը հռչակվել է 1960թվ.: Այն ճամանակ արդեն կղզու հյուսիսային մասում ձևավորվել էր թուրք-կիպրոսցիների ոչ մեծ համայնք՝ երկրի ամբողջ բնակչության 18%:

Թող աշխարհի վրա թևածի խաղաղությունը,թող մեր երկիրը լինի խաղաղ ու հզոր:Խաղաղություն,խաղաղություն,խաղաղություն:

Գրականության ցանկ

1. Վալեսյան Ա.,
2. Վալեսյան Լ. քաղաքական աշխարհագրության հիմունքներ Ե <<Լույս>> հրատարակիչ 1996